

# ՄՈՆԱՎԱՆԱ

ԴՐԱՄԱ ԵՐԵՎԱ ԴԱՐՁՈՂ ՌԻԹԵԱԼՐԱ

Մօրիս Մէտէռլինկի

ԵՐԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂ ՈՒ ԲԻՒՐԻՆ

Հանդիսարան՝ Դուիդո Կօլոննայի պալատում։ Խարձը պատուհաններ, մարմարէ սիներ, կամարակապ սրան, գորդ ու վարագոյններ և ալլն, շախ կղզմում երկուորդ կարգում ընդգրծմակ պատշգամբ, որի հազարամի (բարձրաբաղ) վրաւ շարուած են մեծ-մեծ ծաղկակիր անօթներ և ուր բարձրանում են երկու արտաքին սանդուխներափ։ Հանդիսարանի մէջուեցաւ, սիների արանքին, մարմարէ լալն աստիճաններ տանում են դէպի ալզ նոյն պատշտամբը, որտեղից պէտք է որ երես քաղաքի մի մասը։

Առաջին և եսաւան

Ներս են մտնում ԳՈՒԻԴՅՈՆ, ՄԱՐԿՈՆ, ԲՈՒՍՈՆ և ՏՈՒԷԼՈՆ։

ԳՈՒԻԴՅՈՆ. Ես արեցի ձեր ուզածը, նրա ուզածը, ամենիցի ուզածը, արդարութիւնը պահանջում է, որ իմ կամքն էլ վերջապէս կատարուի։ Ես լրեցի, ես թաք կացայ, ես չունչս պահեցի, ինչպէս կարող է անել մի վախկոտ մարդ, երբ գողերը կողոպառում են իր տունը... Եւ ես ազնիւ էի իմ անարգութեան մէջ... Դուք ինձ մանրակրկիտ վաճառական դարձրիք... Տեսէք, արշալոյսը բացւում է... Տեղից չեմ շարժուել մինչև այժմ... Ես չափում ու կշռում էի իմ խայտառակութիւնը... Պէտք էր ճշափւ կատարել սակարկութեան պայմանները և վճարել ձեր ուտելիքների գինը... Պէտք էր, որ այս վաճմ դիշերը մինչև ամենավերջին բոպէն պատկանէր զնողին։ Օ՞հ, այդ շատ թանկ գին չէր այնքան տաւարի, այնքան ցորեն ու բանջարի համար... Բայց այժմ ես վճարել պրծել եմ իմ ամբողջ վճարելիքը և դուք կերել՝ կշատցել էք... Այժմ ես արդէն աղատ եմ, այժմ կրկին ես եմ այստեղի իշխանաւորը և դուրս եմ զալիս իմ խայտառակութիւնից...

**ՄԱՐԿ0.** Զը գիտեմ, որդիս, թէ ինչ էք ուզում անել...  
 Զը կայ ոչ մի մարդ, որ իրաւունք ունենար միջամտել ձեր  
 վշտի նման մի վշտի կամ կարողանար սփոփել այդպիսի մի  
 վիշտ, և ես շատ լաւ հասկանում եմ, որ նոյն իսկ այն անհուն  
 երջանկութիւնը, որ շրջապատռմ է այժմ ձեզ ամեն կողմից և  
 որ ծագել է ձեր վշտի աղբիւրից, կարող է միմիայն աւելի և  
 դառնացնել ձեր առաջին արցունքները... Այժմ, երբ քաղաքը  
 փրկուած է արդէն, մեզ էլ գրեթէ ցաւալի է թւում այդ փըր-  
 կութիւնը, որ այնքան թանկ նստեց ձեզ, և մենք, կարելի է  
 ասել, յակամայից խոնարհեցնում ենք մեր գլուխը այն մարդու  
 ներկայութեամբ, որին միմիայն, անիրաւաբար, վիճակուեց  
 կրել ամբողջ ծանրութիւնը... Եւ սակայն, եթէ մի հրաշքով  
 երէկուան օրը նորից կրիսուէր, ես պարտաւոր կը լինէի վարուել  
 այնպէս, ինչպէս երէկ վարուեցի, մատնացոյց անել նոյն զոհերը  
 և դրդել գործելու նոյն անարդարութիւնը, որովհետեւ արդար  
 վարուել ուզողը ստիպուած է շարունակ՝ դառնացած սրտով  
 ընտրել երկու կամ երեք անհաւասար անարդարութիւններից  
 մէկը կամ միւսը... Զը գիտեմ՝ ինչ ասեմ ձեզ, բայց եթէ իմ  
 ձայնը, որ երբեմն սիրելի էր ձեզ, կարող է այս վերջին ան-  
 գամը թափանցել ձեր սրտի մէջ, որ միշտ լսում էր նրան,  
 խնդրում եմ ձեզ, որդիս, չք հետեւէք կուրօրէն այն խորհուրդ-  
 ներին, որ կը թելագրեն ձեզ առաջին բոպէի զայրոյթն ու  
 վիշտը... Սպասեցէք դոնէ, որ անցնի այն վտանգաւոր ժամը,  
 որ մեզ ասել է տալիս այնպիսի խօսքեր, որ չի կարելի այլ ևս  
 յետ առնել... Վաննան գալու է շուտով... Մի դատէք նրան այ-  
 սօր, յետ մի մղէք ոչ ոքի, մի արէք ոչ մի բան, որ կարող է  
 անուղղելի լինել... Իսկ իմացէք, որ անուղղելի է, անհրաժեշտու-  
 թէն և անգթօրէն անուղղելի՝ այն ամենը, ինչ որ մարդ  
 անում ու ասում է ծայրայեղ վշտի բոպէին... Վաննան  
 գալու է շուտով, յուսահատ, բայց և երջանիկ... Մի յանդիմա-  
 նէք նրան... Մի անուղղելի նրա հետ գալուն պէս, եթէ ոյժ  
 չէք զգում ձեր մէջ խօսելու նրա հետ այնպէս, ինչպէս կը  
 խօսէիք հետը, եթէ վաղուց ի վեր վերադարձած լինէր... Եթէ  
 իմանայիք, որքան բարութիւն, արդարութիւն և խոհեմութիւն  
 են թելագրում սահող ժամերը մեզ, ողորմելի մարդկանց, որ  
 խաղալիք ենք այնքան հզօր ոյժերի... Հաւատացէք ինձ, միակ  
 խօսքերը, որոնք զին ունեն, միակ խօսքերը, որ մարդ պէտք է  
 առաջուց իմանայ, երբ կակիծը կուրացնում է մեզ, այն խօս-  
 քերն են, որ մարդ արտասանում է այն ժամանակ, երբ աչքերը  
 բացւում են, երբ հասկանում է եղածը, երբ արդէն ներած է  
 լինում և սկսում է նորից սիրել...

ԳՈՒՐԻՒԹՅՈՒՆ. Գրծաւ ձեր տաելիքը... Իմասցէք վերջապէս, որ  
այլ ևս մենցել է մեղքածոր խօսքերի ժամանակը և որ այդ-  
պիսի խօսքերով չի կարելի այլ ևս խարել ոչ ոքի... Ես թոյլ  
տաւեցի, որ վերջին անգամ դուք տաէք ինձ ձեր տաելիքը,  
որովհետև ուզում էի իմանալ, թէ ինչ ունէք ինձ ձեր տալու  
ձեր իմաստութիւնը կեսանքիս փոխարէն, որ նա խորտա-  
կեց այնքան վարպետորէն... Այդ է ուրեմն նրա առաջարկածը  
Սպասել, համբերել, ընդունել, մոռանալ, ներբել և լավ... Սա-  
կայն կը ներէց Այդ շատ քիչ է... Ես աւելի լաւ եմ համա-  
րում խոհեմ չը լինել, և լոկ խօսքերը ինձ բառական չեն խայ-  
տառակութիւնցս դուրս գալու համար... Իմ ուզածու շատ  
պարզ քան է Մի քանի տարի առաջ դուք իմքներդ կը թերա-  
դրէիք ինձ նոյն բանը: Վաննան պատկանել է ուրիշ աղջամար-  
դի, Վաննան այլ ևս իմս չէ, քանի որ կենդանի է այդ մարդը,  
Ես չեմ կարող ապրել՝ առաջնորդուելով քերականական կանա-  
ներով: Ես ուրիշ կանոնների եմ հետեւմ, ես հետեւմ եմ այն  
վեն օրէնքին, որ իշխում է բոլոր՝ սրտի տէր մարդկանց վրայ...  
Պիզան ունի այժմ ուտելու, և պաշտպանուելու միջոցների նա զէն-  
քեր է ստացել, ես կը վերցնեմ այդ զէնքերից իմ արդար բաժինը:  
Այսօրուանից ինձ են պատկանում Պիզայի զինուորները, զոնէ  
նրանցից լաւագոյնները, որոնց ես եմ զօրագրել և որոնց վարձը  
ես եմ վճարել իմ սեփական քսակից, Ես այլ ես ոչինչ պար-  
տական չեմ Պիզային և յետ եմ վերցնում այն, ինչ որ ինձ է  
պատկանում: Այդ զինուորներին ես յետ կը տամ Պիզային  
միայն այն ժամանակ, երբ նրանք կանեն այն, ինչ որ ես իրա-  
ւունք ունեմ նրանց անել տալու... Գալով մասցածին, ահա թէ  
ինչ եմ անելու, Վաննան... Ես ներում եմ նրան կամ կը նե-  
րեմ նրան, երբ այն մարդը այլ ես կենդանի չը լինի... Վան-  
նան խարուել է, նա հերսաւար է սխալուել... Մարզիկ զազրելի կերպով  
ի շարը գործ դրին նրա սրտի գուրին ու հոգու վեհութիւնը...  
Այդ ոչինչ այդ կարող է՝ եթէ ոչ մոռացուել՝ զոնէ այնքան  
աղջամանալ անցեալի խորբում, որ սիրող աչքը այլ ես չի կա-  
րողանալ նշմարել նրան... Բայց կայ մի մարդ, որին ես չեմ  
կարող տեսնել այլ ես առանց կարմրելու և առանց քսամմելու...  
Մի մարդ կայ այսանդ, որի միակ նպատակակէտը պէսաք է  
լինէր ուղեցոյց և նեցուկ հանգիստանալ ազնի: և վեն երջան-  
կութեան... Բայց նա գարձաւ այդ երջանկութեան ոռփիը և  
կործանիչը, և ահա դուք ականատես կը լինէք այժմ մի բանի,  
որ սոսկալի է, բայց և միանգամայն արդար դուք կը տեսնէք,  
թէ ինչպէս մի զաւակ, այս առժամանակ տակին ու վրայ եղած

աշխարհում, դատում է իր հարազատ հօրը, անիծում է նրան, ուրանում է նրան, քում է նրան իր աշքի առաջից և արհամարհում ու ատում է նրան...

**ՄԱՐԿՈ.** Նզովեցէք ինձ, որդիս, միայն թէ ներեցէք նըրան... Եթէ ձեր կարծիքով մի աններելի սխալ կայ այն հերոսութեան մէջ, որ փրկեց բիւր կեանքեր, սխալը ամբողջովին իմս է, իսկ հերոսութիւնը՝ ուրիշներինը... Լաւ խորհուրդ էր իմ տուածր, բայց նա հեշտ խորհուրդ էր ինձ համար, որովհետեւ ես մաս չունէի պահանջուած զոհի մէջ... Բայց այսօր, երբ այդ խորհրդի պատճառով ես զրկուում եմ այն բանից, որ ամենաթանկն է ինձ համար, նա աւելի ես լաւ է թւում ինձ... Դուք շատ լաւ էք դատել ձեր խղճի համաձայն, իսկ և իսկ այսպէս, ինչպէս ես ինքս կը դատէի, եթէ աւելի ջահիլ լինէի... Ես գնում եմ, զաւակս, և դուք չէք տեսնիլ ինձ այլ ես. ես լաւ գիտեմ, որ իմ տեսքը կը դառնացնի ձեր հոգին, բայց յոյս ունեմ կրկին տեսնել ձեզ, առանց ձեր աշքին երևալու... Եւ քանի որ ես հեռանում եմ առանց համարձակուելու յուսար, թէ կապրեմ մինչև այն օրը, երբ դուք ինձ կը ներէք ձեզ հասցրած չարիքս,—որովհետեւ ես ինքս էլ ապրել եմ, ուստի և լաւ գիտեմ, որ ներողութիւնը շատ դանդաղ է առաջ ընթանում, երբ մարդ իր կեանքի կէտումն է դանւում ձեզ պէս,—քանի որ հեռանում եմ այստեղից այսպիսի աննախանձելի դրութեան մէջ, կուզէի գոնէ վստահ լինել, որ ինձ հետ տանում եմ այստեղից ձեր ամբողջ քէնն ու տեսելութիւնը, ձեր սրտը բոլոր դաժան յիշողութիւնները, և որ ոչ մի նշոյլ այդ զգացմունքներից չի մնայ նրա համար, որ գալու է շուտով... Ես միայն մի բան կը խնդրեմ ձեզանից... Թոյլ տուէք ինձ վերջին անգամը տեսնեմ, թէ ինչպէս նա նետուում է ձեր զիրկը... Այսուհետեւ ես կը հեռանամ առանց տրտնջալու և առանց ձեզ անարդար համարելու... Լաւ է, որ մարդկային աղէտների միջոցին ամենածերը վերցնի իր ուսերի վրայ այն բոլորը, որ նա կարող է կրել, որովհետեւ մի քանի քայլից յետոյ նրա վրայից բոլորովին վերցնելու են բեռը...

(Արդէն Մարկոյի վերջին խօսքերի ժամանակ դրսեւմ ակսում է բարձրանալ խառնաշփոթ և ուժգին աղմուկ, Ագդ խօսքերին հետեւող լռութեան միջոցին արդ աղմուկը սաստկանում է, մօտենում է և աւելի որոշ է զառնում։ Սկզբում սպասողութեան մրմոնջ է այդ, այնուհետեւ գեռ և հեռաւում գտնուող, բայց հետզհետէ յառաջացող ամբոխի ցնծութեան աղարակներ, Շատ չանցած, հետզհետէ աւելի ու աւելի պարզ որոշուելով և ամեն կողմից թափանցելով անհամար ամբոխի յախառն ժխորի միջով, լսում են անթիւ անգամ կրկնուող աղաղակներ։ «Ա, ա-

Էս, Վա՛ննա... Միւ Մօնն Վաննան... Փոսէ ու պափի Մօնն Վաննային... Վա՛ննա, Վա՛ննա, Վա՛ննա...» և այլ և այլն).

**ՄԱՐԿՈ.** (Առաջ նետուելով դեպի կամարակապ սրան, որ տանում է դեպի պատճամբը): Վաննան է... Նա գալիս է... Նա այնտեղ է... Ժողովուրդը ողջունում է նրան ցնծութեան ազագակներով: Լսեցէք, լսեցէք...

(Բառան և Տօնէլով նոյնպէս զեռմ էն պատճամբը, իսկ Կոփզօն ճուու է միախակ և, բնեած մի սինի, նայում է դեպի Ընուն: Այս ամբով տեսարանավերի ընթացքում զրակի ազագակները կրկնապատճառ էն և արագուրազ մասենում):

**ՄԱՐԿՈ.** (Պատճամբում): Օ՛, ամրազչ հրապարակը, փողոցները, ծառերի ճիւղերը, պատուհանները՝ ծածկուած են զլուխներով և ձեռներով, որնք շարժւում են... Կարծես քարերը, տերեւներն ու կղմինցները չունչ են տաել ու մարդ են դարձել... Բայց ուր է Վաննան... Ամսի նման մի բան եմ տեսնում միայն, որ բացւում է ու նորից խփեում... Բօսօ, թըշտառ աջքերս դաւաճնում են սիրոյ գորովիսո... Ծերութիւնս, արցունքներս ու երկիւզս կուրացնում են նրանց... Նրանք չեն կարողանում զանել այն միակ էակին, որին փնտառում են... Ուր է նա... Դու տեսնում ես նրան Ո՞ր կողմից պէտք է զբնաւագծ...

**ԲՈՒՌՈՅ.** (Պահելով Երան): Զէ, մի իջէք ներքեւ... Ամրոխը շատ հոծ է և այլ ես չի կարողանում ինքն իրան զսպել... Կանանց ճիւղում են, երեխաններին ոտնատակ են տալիս... Բացի այդ՝ օգուա էլ չը կայ ձեր իջնելուց, Վաննան այստեղ կը հասնի, նախ քան դուք կարողանաք իջնել... Նա մօտենում է, ահա նա... Բարձրացնում է զլուխը, մեզ նկատեց... Աւելի արագ է քայլում, նայում է այս կողմը ու ժպտում:

**ՄԱՐԿՈ.** Ուրեմն դուք տեսնում էք նրան, մինչդեռ ես չեմ տեսնում... Ախ, իմ կուրացած աջքեր, որ չեն կարողանում ոչինչ որոշել... Այս առաջին անգամն է, որ անիծում եմ ծերութիւնս, որ այնքան բան սովորեցրեց ինձ՝ այս մէկը թաղցնելու համար... Բայց եթէ տեսնում էք նրան, ասացէք՝ բնչպէս է նա... Տեսնում էք արդեօք նրա դէմքը...

**ԲՈՒՌՈՅ.** Նա գալիս է յաղթական կերպով... Կարծէք լոյս սփռելիս լինի իրան ողջունող ամրօխի վրայ...

**ՏՕՆԵԼՈ.** Բայց ով է այն մարդը, որ գալիս է նրա կողքին...

**ԲՈՒՌՈՅ.** Զը դիտեմ... Զեմ ձանաշում նրան... Դէմքը ծածկուած է...

**ՄԱՐԿՈ.** Լսում էք, որքան մոլեզին է ցնծութիւնը... Ամ-

բողջ պալատը ցնցւում է և ծաղկանօթների ծաղիկները թափւում են ճաղերի վրայ... Կարծէք մարմարէ աստիճաններն ու սալերը բարձրանում են մեր ոտների տակ և ուզում են մեզ բոլորին տանել, նետել ընդհանուր ցնծութեան յորձանքի մէջ... Օ՛, սկսում եմ տեսնել... Ամբոխը համուռմ է վանդակներին... Տեսնում եմ, որ նա հրապարակում յանկարծ բաժանուում է երկու մասի...»

**ԲՈՌՍՅՈ.** Այո, Վաննան հետգիետէ մօտենում է մեզ և ամբոխը ճանապարհ է բանում նրա առաջ, կազմելով յաղթութեան ու սիրոյ ցանկապատ... Փողովուրդը ծաղիկներ, արմաւենու ճիւղեր և գոհարներ է նետում նրա կողմը... Մայրերը մեկնում են կռները, որպէս զի նա ձեռքը քաի իրանց գրկի երեխաներին, իսկ այր մարդիկ չորում են ու համբուրում այն քարերը, որոնց դիպել է նրա ոտքը... Զգուշացէք... Մօտենում են... Զեն կարողանում այլ ես զսպել իրանց... Եթէ բարձրանան սանդուխով, մեզ ոտի տակ կը տան... Բարեբախտաբար՝ պահապանները շտապում են ամեն կողմից խափանել մուտքերը... Գնամ հրաման տամ յետ մղել ժողովրդին և փակել վանդակները, եթէ արդէն ուշ չէ...»

**ՄԱՐԿՅՈ.** Ոչ, ոչ! Թողէք, որ նրանց հրճուանքը զեզուի այստեղ այնքան առատօրէն, որքան ուզում է իրանց սիրտը... Ինչ հոգ թէ նրանք ոտնատակ կը տան շատ բան, զուցէ և մեզ, երբ նրանց սէրը այդպէս անհուն է... Նրանք այնքան տանջուել են, որ իրաւունք ունեն փրկուելուց յետոյ կանգ շառնել ոչ մի սահմանի առաջ... Ո՞վ իմ խեղճ, իմ բարի ժողովուրդ... Ես էլ քեզ նման հարբածի պէս եմ և զողոգոռում եմ քեզ հետ... Ո՞վ Վաննա, իմ Վաննա... Այդ դու ես առաջին աստիճանի վրայ... (Նա նետում է առաջ, ուզելով իջնել ներքեւ Վաննային հանդիպելու համար, բայց Բոսոն եւ Տօռելլօն չեն բողնում): Վեր ել, վեր ել, Վաննա... Սրանք ինձ բռնել են, չեն թողնում՝ իջնեմ... Սրանք վախենում են հրճուանքից... Վեր ել, վեր ել, Վաննա, աւելի գեղեցիկ, քան Յուղիթը, և աւելի անարատ, քան Լուկրէցիան... Վեր ել, վեր ել, Վաննա, վեր ել ծաղիկների միջով (Վազում է և մարմարէ անօթներից լիաբուռն պոկելով ծաղիկները՝ նետում է սանդուխի ստորոտը), ես էլ ունեմ ծաղիկներ կեանքը ողջունելու... համար... ես էլ ունեմ վարդ, շուշան ու դափնի՝ փառքը պատկելու համար:

## ԵՐԿՐՈՐԴ ՇԵՍՏԵՐԹԻՑ

ՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ ԵՒ ՊՐԻՆՉԱՎԱԼԱՀԵՆ ՈՒ ՎԱՆՆԱՆ.

(Աղաբակները աւելի մոլորդն ճն դառնաւու Վաննան, Պրինչիվալէլի ազեկցութեամբ, երեսմ է առնգուիդ ծուրին ու նետում է վնրդին առաջնանի վրայ կանգնած Մարկոսի գերեզ. Ամրուր զրոն է առջի և զրաւում է ամրողի առնգուիսը, պատշաճամբը ու կամարակաց սրանց, բայց որոշ հետաւորաթիւն է թաղնում իր և Վաննայից, Պրինչիվալէլէլից, Մարկոսից, Բուռուց ու Տառկլուից կազմած խմբի մէջ):

ՎԱՆՆԱ. (Նետուելով Մարկոսի զիւկը), Ես երջանիկ եմ, հայր իմ...

ՄԱԽԿՕ. (Պինդ գրկելով նրան), Ես էլ երջանիկ եմ. աղջիկս, որ նորից արժանանում եմ տեսութեանդ... Թող նայեմ երեսիդ՝ մինչ համբաւրւում ենք այսպէսս. Օ՛, աւելի ճաճանչափայլ է դէմքդ, քան եթէ յետ գարձած մինէիր երկնային բարձունքից, որ փառաբանում է վերադադղ... Անոելի թշնամին չի կարողացել ձքացնել և ոչ մի ցոլք քո աչքի լոյսից, և ոչ մի ժայիտ՝ քո շրթունքներից...

ՎԱՆՆԱ. Ես ձեզ կասեմ, հայր իմ... Բայց ուր է Գուրիոն... Ամենից առաջ նրան պէտք է ազտակմ... Նա դեռ չը զիտէ...

ՄԱԽԿՕ. Եկ, Վաննա, անա այսուղ է նա... Եկ, ինձ քշում են և թերես իրաւացի է այդ, բայց քեզ ներում են քո հրաշալի սիսալը, և ես ուզում եմ քեզ նետել նրա զիրկը, որպէս զի իմ վերջին շարժումը և վերջին հայեացքը ձեր նորից զանեն սիրով շաղկապուած...

(Այդ բազեին Դուիդօն զնում է Վաննայի կողմը, Վաննան ուզում է թիբանը բանալ և շարժում է անում նրա զիրկը նետուելու համար, բայց Դուիդօն խիստ շարժումով կանցնեցնում ու լեռ է մզում նրան և զիմում է նրան շրջապառղներին):

ԳՈՒԻԻՒԾ. (Աւրուկ. Խիստ եւ նրամայական եղանակով), ՄԵՆՆԱԿ թողէք մնել:

ՎԱՆՆԱ. Ոչ, ոչ... Ամենքդ էլ մնացէք այսուկ... Դու չը զիսես, Գուրիդօ... Ես ուզում եմ քեզ ասել, ես ուզում եմ ամենքին ասել... Ես անարատ եմ վերադաճել, Գուրիդօ, և ոչ ոք չի կարող...

ԳՈՒԻԻՒԾ. (Ընդհատելով նրա խօսքը, յետ մղելով նրան եւ ձայնը բարձրացնելով բարկութիւնիցը, որ նիսզինեւ սասկանում է), Մի մօտեցիր ինձ, զես մի զիսիր ինձ... (Յառաջանալով դեպի ամբոխը, որ սկսել էր գրոն տալ դեպի դահլիճը եւ որ բներկում է նրա դիմաց), Զը լսեցիք... Խնդրում եմ, որ զուրս

դուք և մեզ մնակ թողնեք, Դուք ձեր տների տէրն էք, ես էլ այստեղի տէրն եմ Բօսո և Տօնէլլօ, կանչեցէք պահապաններին Օ՛, ես ձեզ լաւ եմ հասկանում... Փառաւոր ինչոքից յետոյ տեսարան է հարկաւոր ձեզ... Յայց դուք չեք տեսնիլ այդ տեսարանը. նա ձեզ համար չէ, դուք արժանի չեք նրան... Միս ու գինի բաւական ունէք, ես վճարեցի բոլորիդ կեր ու խումբ գինը, էլ ինչ էք ուզում ինձանից... Կարծեմ, իրաւունք ունեմ պահանջել, որ գոնէ վիշտս ինձ թողնէք... Գընացէք, կերէք ու խմէք... Ես ուրիշ հոգսերով եմ զբաղուած և զսպում եմ արցունքս, որ դուք չեք տեսնիլ... Զեզ եմ ասում, գինացէք այստեղից... (Լուս շարժում ամբոխի մէջ, որ Ժիշ-Ժիշ անհետանում է): Դուք ինչու էք ոտներդ կախ զցել... (Բուռն շարժումով բանելով հօր կոնիցը): Դուք ես Մանաւանդ դուք: Ամենից առաջ դուք, որովհետեւ ձեր մեղքն է այս... Դուք չեք տեսնիլ իմ արցունքները... Ա՛խ, ես ուզում եմ միայնակ լինել, աւելի միայնակ, քան գերեզմանում, որպէս զի իմանամ վերջապէս այն, ինչ որ պէտք է իմանամ... (Նկատելով անշարժ կանգնած Պրինչիվալլէին): Խոկ դուք... Ո՞գ էք դուք, որ այդտեղ կանգնած էք քօղարկուած արձանի նման... Մեզ սպասող խայտառակութիւնն էք, ինչ է, թէ մահը... Զը հասկացաք, որ պէտք է հեռանալ այստեղից... (Վեցնելով պահապաններից մեկի գեղարդը): Գուցէ ուզում էք, որ գեղարդի հարուածներով քշեմ ձաղ այստեղից... Ի՞նչ էք շօշափում ձեր սուրբը... Ես էլ սուր ունեմ, բայց նա ձեզ համար չէ... Նա այսուհետեւ ծոռայելու է ինձ միմիայն մի մարդու դէմ... Այդ մարդը... Բայց ինչու էք այդպէս ծածկել ձեր զուռիսը... Ես սիրտ չունեմ այժմ դիմակով զուարձանալու... Զէք պատասխանում... Կացէք, ես ուզում եմ իմանալ, թէ ո՞գ էք դուք... (Մօտենում է, որ դեն շպրտի երա զլիսի ծածկոյթը: Վանեան ենթառում է Պրինչիվալլէի ու երա արաներ եւ կանգնեցնում է երան):

ՎԱՆՆԱ. Զեռք չը տաք սրան...

ԳՈՒԻԴՈ. (Զարմացած կանք է առնում): Օ՛, Վաննա... Դու, Վաննա... Ո՞րտեղից է քեզ այդ կորովը...

ՎԱՆՆԱ. Սա է ինձ փրկել...

ԳՈՒԻԴՈ. Օ՛, օ Սա քեզ փրկել է... Փրկել է, երբ արդէն... Երբ արդէն շատ ուշ էր... Լաւ բան է արել... Բայց աւելի լաւ կը լինէր...

ՎԱՆՆԱ. (Տենրային կերպով): Թոյլ տուր վերջապէս ասել... Աղաչում եմ, Գուիդօ... Մի հատ խօսք բաւական է, որ ամեն ինչ իմանամ... Քեզ ասում եմ, որ սա ինձ փրկեց և որ պատիւս իննայուած է, յարգուած... Սա ինձ ձեռք չի տուել...

Աս եկաւ այստեղ իմ հոգանուորութեան տակ... Ես որոն տուեցի իմ խօսքը, քո խօսքը, մեր խօսքը... Սպասիր մինչեւ բարկութիւնդ նստի... Թոյլ տուր տակն քեզ... Աս ոչ մի այն պիսի խօսք չի արտասանել, ոչ մի այնպիսի շարժում չի արել, որ...

ԴՈՒԽԻՉՈ, Բայց ով է սա, ով...

ՎԱՆՆԱ, ՊՐԻՆԺԻՎԱԼԼԵՆ...

ԴՈՒԽԻՉՈ, ՄՌՎ... Սա... ՄՌՎ, այս մարդը... Աս, ՊՐԻՆԺԻՎԱԼԼԵՆ...

ՎԱՆՆԱ, Այս, այս, ոս քո հիւրս է... Սա վատահութեամբ է վերաբերում քեզ... Սա մեր ազատարարն է...

ԴՈՒԽԻՉՈ. (Մի ռոպի մնում է ապօած, այնուհետև սկսում է խօսել նետքնեւ սասկացող ուժքնութեամբ ու յափօտակութեամբ, այնպէս որ Կաննան չի կարողանում ընդհատել խօսք), Օ՛, այդ արածդ, իմ Վաննա... Այդ արածդ՝ կարծես անարատ ցող լինի, որ իջում է երկնքի անապակ ականքից... Օ՛հ, Վաննա, իմ Վաննա... Վեհ է քո հոգին, և ես քեզ սիրում եմ ու հասկանում վերջապէս... Այս, դու իրաւացի էիր, քանի որ չէր կարելի այդ չանել, անշուշա պէտք էր այնպէս անել, ինչպէս դու արեցիր... Օ՛, հասկանում եմ քո խօրագիտութիւնը, որ աւելի զօրաւոր գանուեց, քան դրա ոճիրը, Բայց բնչպէս կարող էի իմանալ այդ, ինչպէս կարող էի նախատեսել... Մի ուրիշ գուցէ սպանէր դրան, ինչպէս Յուղիթը Հոլոֆերնին, Բայց դրա ոճիրը աւելի մնե էր, քան Հոլոֆերնի ոճիրը, և աւելի մնե վրէծ էր պահանջում... Պէտք էր դրան բերել այստեղ, ինչպէս որ դու արեցիր... Պէտք էր դրան բերել այստեղ, որպէս զի իր զոհերը՝ իր դահիճները դառնան... Հրաշալի յաղթանակ..., Դա հետեւում էր անշուշա քո համրոյյներին հեղարար, քեզօրէն, ինչպէս մի գառն՝ ծաղկափթիթ ոստի յետեւից... Ի՞նչ նշանակութիւն ունեն այն համրոյյները, որ մարդ տալիս է ատելութեամբ տոգորուած... Ի՞նչ նշանակութիւն ունեն քո տոււած համրոյյները, որոնց չորհի դա ընկաւ քո լարած որոգայթը... Այս, այս, դու իրաւացի ես դատել, եթէ դրան սպանէիր այնտեղ, վրանում, զազրելի ոճիրից յետոյ, երբ միայնակ էիք, այդ բաւական չէր լինի, կասկածի տեղիք կը մնար, մարդիկ իրանց աշքով տեսած չէին լինիլ... Արար աշխարհքը զիտէր նողկալի զաշինքը, պէտք էր որ արար աշխարհքն իմանայ, թէ ինչ հատուցումն են ստանում նրանք, որոնք այդ տատիճան անարգում են մարդկային բնութիւնը... Բայց բնչպէս կարողացար այդ անել... Այդ ամենամեծ յաղթանակն է, որ երբեւիցէ կանացի պատիւը... Կաց, կաց, դու այժմ կը պատմես ամենքին... (Վա-

զում և դեպի պատգամբը եւ գոռում կ' որքան ուժումը կայ): Պրինչիվալէն. Պրինչիվալէն... Մեր ձեռքն է ընկել մեր ոխերիմ թշնամին...

ՎԱՆՆԱ: (Քայլ առ բայլ հետեւում է նրան ու աշխատում յետ կացնել): Զէ, չէ, լսիր ինձ... Զէ, այդ չէ... Աղաչում եմ, Գուիդո... Զէ, սխալուում եմ, Գուիդո...

ԳՈՒԻԴՈ: (Ազատուելով նրա ձեռքից ու կրկնապատիկ ուժով գուալով): Թող ինձ, կը տեսնես այժմ... Նրանք ամենքը պէտք է իմանան այդ... (Կանչելով ժողովրդին): Այժմ կարող եք գալ, այժմ պէտք է գալք... Դուք էլ, հայր իմ, որ խրել եք ձեր գլուխը երկու ճաղերի արանքը ու զաղտուկ դիտում էք այստեղ կատարուածը, կարծէք սպասելիս լինէք, թէ գուցէ վերջապէս երեւան գայ մի որեւ է աստուած և ուղղի ձեր պատճառած չարիքը ու հաշտութիւն զցի մեր մէջ: Յետ զարձէք, հաշտութիւնը կայացել է արդէն, անլուր հրաշքը կատարուել է... Թող քարերն էլ տեսնեն ու լսեն այն, ինչ որ տեղի է ունենալու այժմ... Ես այլ եւս չեմ թաքնում ոչ ոքից և խայտառակութիւնս չքանում է արդէն: Մի բոպէ եւս, և ես աւելի անարատ կը լինեմ, քան ամենից անարատները, և աւելի երջանիկ, քան նրանք, որոնք ոչինչ չեն կորցրել: Այժմ դուք կարող եք ցնծութեան աղաղակներ արձակել ի պատիւ իմ վաննայի... Այժմ ես էլ ձեզ հետ միացած աղաղակում եմ ի պատիւ Վաննայի, և աւելի բարձրածայն, քան դուք ամենքդ... (Պատգամբում խոնուղներին նրելով դեպի դամինը): Այս անգամ դուք իսկապէս տեսարանի բան կունենաք... Աշխարհիս երեսին արդարադատութիւն կայ... Օ, ես այդ շատ լաւ գիտէի, բայց չէի կարող կարծել, թէ այսքան շուտով կը լինի այդ... Ես վճռել էի ակնապիշ սպասել երկար տարիներ այդ արդարադատութեանը... Եւ անցնելու էի ամբողջ կեսնքս, դարանամուտ աչք պահելով այդ արդար հատուցմանը՝ ամեն տեղ, շաւիդների ոլորաններում, անտառների խորշերում, փողոցների անկիւններում... Եւ ահա յանկարծ այդ արդար հատուցումը ես գտնում եմ այստեղ, այս դահլիճում, իմ դիմաց, ձեր դիմաց, այս աստիճանների վրայ... Ի՞նչ չը տեսնուած հրաշք է պատահել... Խակոյն կ'իմանանք այդ, Վաննան է գործել այդ հրաշք... Բայց որովհետեւ արդարադատութիւնը այցելել է մեզ, կը նշանակի նա կատարելու է իր գործը... (Դիմում է Մարկօյին, բրոնելով կը լուցիցը): Լաւ էք տեսնում այս մարդուն...

ՄԱՐԿՈ: Այս, ով է դա...

ԳՈՒԻԴՈ: Զէ որ դուք տեսել էք սրան, խօսել էք հետը. Դուք չէիք սրան սրա հաճոյակատար լրաբերը...

(Պրինչիվալլեն դաշնում է զլուխը գեղի Մարկան, ու նրան  
նանաշում է):

ՄԱՐԿՈ: Պրինչիվալլեն...

(Խառանցում ամբոխի մէջ):

ԳՈՒԻԴՈ: Այս, այս. Պրինչիվալլեն, ինքը Պրինչիվալլեն...  
Մօտեցէք, նայեցէք, շօշափեցէք. խօսեցէք հար... Գուցէ մի  
նոր յանձնարարութիւն ունի ձեզ տալու... Օ՛, ի հարկէ, ոս  
այլ եւս այն փայլուն Պրինչիվալլեն չէ. բայց իմ մէջ գութ չէ  
կայ սրա համար... Հրէշաւոր ու անլուր նենդութեամբ ոս  
խլեց ինձանից միակ բանը աշխարհումն. որ ես չեի կարող տալ  
իրան... Եւ այժմ արդարացատութիւնը և մի խորագիտութիւն.  
որ առելի շքնազ է, քան արդարացատութիւնը, որոն իր ոտագ  
ըերել են այստեղ, որպէս զի ինդրի ինձանից միակ հաստացումը,  
որ ես կարող եմ տալ իրան... Խրաւունք չունէի հրաշը խօս-  
տանալու ձեզ... Մօտեցէք, մի զախենար, աս այլ եւս չի զնալ  
այստեղից... Բայց լաւ կողագեցէք զաները... Մի գուցէ յանկարծ  
մի ներհակ հրաշք խլի սրան մեր ձեռքից... Բայց ձեռք չը  
տանք սրան իսկոյնեւեթ... Պահենք սրան աւելի երկարաւեւ  
զուարձութիւնների համար... Ո՞վ գուք, իմ խեղճ նզրայրներ,  
որոնց սա այնքան տանջեց, չարջարեց, որոնց սա ուզում էր  
կոտորել, որոնց կանանց և զաւակներին ծախում էր սա. նայե-  
ցէք սրան, ահա նա ինքն է և այժմ պատկանում է ինձ, ձեզ.  
մնդ ամննքիս, լսում էք... Բայց ձեզ այնքան չի տանջել սա,  
որքան ինձ... Խսկոյնեւեթ ես կը տամ սրան ձեր ձեռքր...  
իմ Վաննան բերել է սրան այստեղ, որպէս զի մնր վրէժիւնդո-  
րութիւնը անհետ ջնջի մեր խայտառակութիւնը... (Աւելի ան-  
միջական կերպով դիմելով ամբոխին). Դուք ամենքդ այստեղ էք  
և ամենքդ վկայ կը լինէք... Դէաք է պարզել ամեն ինչ... Հա-  
կացազ, թէ ինչումն է հերոսութիւնն ու հրաշքը... Այս մարդը  
տիրացել է Վաննային. Ոչինչ չէր կարելի անել դրա գեմ. դուք  
ամենքդ կամենում էիք, որ այդպէս լինի. Դուք ծափեցիք Վան-  
նային... Ես ոչ որի չեմ անիծում. եղածը անցաւ, և դուք իրա-  
ւունք ունէիք աւելի բարձր դասել ձեր կեանքը, քան իմ խրզ-  
ճուկ բախտաւորութիւնը... Բայց ինչ հնարք կարող էիք դուք  
դանել, որպէս զի նորից կեանք տայիք սիրոյ. զգացմունքին  
հէնց այն բանով, որ նրան մեռցնում է... Դուք շատ յաջող  
կործանեցիք եղածը, բայց պէաք էր վերականգնել հործանածը...  
Եւ ահա տեսէք, Վաննան արեց այդ... Նա աւելի լաւ հնարք  
դտաւ, քան Լուկրէցիան կամ Յուղիթը... Լուկրէցիան ինքն  
իրան սպանեց. Յուղիթը սպանեց Հոլոֆերնին... Օ՛, այդ  
շատ պարզ է ու շատ լուռ ու մունջ... Վաննան չուզեց սպանել

փակած վրանում, այլ բերեց այստեղ կենդանի ողջակէզը, հրապարակական ողջակէզը... Մենք բոլորս պէտք է սրբենք այն անարդութեան արատը, որի մէջ մասն ունենք ամենքս... ի՞նչ պէս արեց նա այդ... Ահա այժմ նա կը պատմի մեզ...

ՎԱՆՆԱ. Այս, ես կը պատմեմ ձեզ. բայց իմ պատմածը բոլորովին ուրիշ բան է լինելու...

ԳՈՒԻԴՅՈ. (Ընդհատելով Վաննայի խօսքը եւ մօտենալով նրան, որպէս զի համբուրի): Թող նախ համբուրեմ քեզ, որպէս զի ամենքն իմանաս...

ՎԱՆՆԱ. (Ուժգին յետ մղելով նրան): Ոչ, ոչ, ոչ գեռ եւս... Ոչ, ոչ, ոչ երբէք այլ եւս, եթէ չը լսես ինձ... Ականջ զիր, Գուրիդո... Այժմ հարցը վերաբերեաւմ է աւելի իրական պատուի և մի այլ տեսակ երշանկութեան, քան այն պատիւն ու երջանկութիւնը, որոնք պղտորել են միտքզ: Օ՛, ես շատ ուրախ եմ, որ ամենքը վերադարձան այստեղ..., Նրանք կը լսեն ասածս, թերեւս՝ նախ քան դու կը լսես. Նրանք կը հասկանան ասածս, թերեւս՝ նախ քան դու կը հասկանաս... Լսիր ինձ, Գուրիդո... Ես չեմ համաձայնիլ գրկել քեզ, մինչեւ որ չիմանաս...

ԳՈՒԻԴՅՈ. (Ընդհատելով նրա խօսքը ու նորից աշխատելով գիշել): Կ'իմանամ, կ'իմանամ, բայց նախ և առաջ ես ուզում եմ...

ՎԱՆՆԱ. Լսիր ինձ, ասում եմ... Ես երբէք սուտ չեմ խօսել, բայց այսօրուայ ասածս այնպիսի խօսքն ճշմարտութիւն է, որ մարդ կարող է միայն մի անգամ ասել իր կեանքում և որ մահ է պատճառում կամ կեանք է տալիս... Լսիր ինձ, Գուրիդո, և նայիր ինձ, եթէ լաւ չես տեսել ինձ մինչև այս րոպէն, առաջինը և միակը, երբ դու կարող ես սիրել ինձ այնպէս, ինչպէս ես կ'ուզէի սիրուած լինել... Ես խօսում եմ այժմ քեզ հետ յանուն մեր կեանքի, յանուն այն ամենի, ինչ որ կազմում է իմ էութիւնը, յանուն այն ամենի, ինչ որ դու ներկայացնում ես ինձ համար... Ընդունակ եղիր հաւատալու անհաւատալիին... Այս մարդը չը տիրացաւ ինձ... Սա կարող էր ամեն ինչ անել, որովհետև ինձ տուել էին իրան... Բայց ձեռք չը տուեց ինձ, և ես գուրս եկայ սրա վրանից այնպէս, ինչպէս կարող էի դուրս գալ եղբօրս վրանից:

ԳՈՒԻԴՅՈ. Ինչու...

ՎԱՆՆԱ. Որովհետև նա սիրում է ինձ...

ԳՈՒԻԴՅՈ. Այս, այդ էր քո ասելիքը... Դրանումն էր հրաշը... Այս, այս, հէնց առաջին խօսքերիցդ ականջովս զիպաւ այնպիսի մի բան, որ անհամկանալի էր... Փայլակի նման աչքիս երևաց մի բռպէ, բայց ես ուշը չը դարձրի... Ինձ թուաց, թէ

վրդովմանքն ու զարգանդը պղասրել են միացդ... Բայց այժմ  
տեսնում եմ, որ պէտք է առելի պարզ նայել հարցին... (Յան-  
կարձ մեղմացնում է ձայնը): Այդպէս ուրեմն, ամբողջ գիշերը  
անցկացրեր այդ մարդու վրանում զրեթէ մերկ ու միայնակ և  
նա չը տիրացաւ քեզ...

ՎԱՆՆԱ. Զէ, չը տիրացաւ...

ԳՈՒԽԻՒԹ. Չեսք չը տունց քեզ, չը համբուրեց քեզ...

ՎԱՆՆԱ. Միայն մի անգամ համբուրեցի ճակատը և նա  
նոյնպիսի համբոյր դրոշմաց ճակատին...

ԳՈՒԽԻՒԹ. Ճակատիդ... Նայիր ինձ, վաճառա... Միթէ ևս  
ուժան եմ այնպիսի մարդու, որ կարող է հաւատալ, թէ ասազերը  
նարկիպի ծաղիկներն են և թէ կարելի է հանդցնել լուսինը,  
թքելով ջրհորի մէջ... Երրուանից ևս այդպէս... Ա՛խ, չեմ ու-  
զում ասել... Չեմ ուզում գեռ ևս անդամալի կորուսի մատնել  
ինձ ու քեզ... Չեմ հասկանում նպատակդ, կամ գուցէ այս սոս-  
կալի գիշերուայ մոլեզին զառանցանքն է ցնորեցրել քո խեթքը  
կամ իմս...

ՎԱՆՆԱ. Զառանցանք չէ ասած, այլ զուտ ձշմարտու-  
թիւն...

ԳՈՒԽԻՒԹ. Ասուուած իմ, զուտ ձշմարտութիւն... Ա՛խ,  
հասպա ինչ է իմ փնտուածս... Բայց չի որ ձշմարտութիւնը պէտք  
է գէթ փոքր ինչ համապատասխան լինի մարդկային ընու-  
թեան...—Ինչեր ևս ասում Մի մարդ այն աստիճան փափա-  
զում է տիրանալ քեզ, որ դաւաճանում է հայրենիքին, ծախում  
է բոլոր ունեցածը լոկ մի գիշերուան վայելքի համար, սոս-  
րաբար կորուսի է մատնում ինքն իրան, անում է այնպիսի  
մի բան, որ երբէք ոչ մի մարդ չի համարձակուել անել, և ան-  
հար է դարձնում իր համար մնալ այլ ևս աշխարհին երեսին,  
և այդ մարդը տեսնում է քեզ մերկ ու միայնակ իր վրանում,  
իր արամադրութեան տակ և զգում է, որ ոչինչ չի մնում իրան  
այլ ևս աշխարհում բացի այդ գիշերից, որ զնել է այդքան  
թանկ գնով, ու յանկարծ նա բաւականանում է միմիայն նրանով,  
որ մի հատիկ համբոյր է դրոշմում ճակատիդ և յետոյ գալիս է  
այսօեղ, որպէս զի մեզ հաւատացնի, որ այդպէս է եղել... Զէ,  
մարդ պէտք է արդար լինի, և չը պէտք է այդ տատիճան  
ծաղը ու ծանակ զարձնի ուրիշների սև բախտը... Եթէ այդ էր  
նրա ուզածը, ինչ կարիք ուներ ստիպելու, որ մի ամրողջ  
ժողովուրդ անցկացնէր այսպիսի մի գիշեր, և իմ սիրոս սնաց-  
նելու այնպիսի վշտով, որ ինձ տաօը տարով ծերացրեց ու  
զրեթէ խելագար դարձրեց... Ա՛խ, եթէ նա ուզում էր միայն  
մի համբոյր դրոշմել ճակատիդ, նա կարող էր այդ անել ու

փրկել մեզ առանց այսքան տանջելու... նա կարող էր ուղղակի գալ այստեղ իբր մի ազատարար աստուած... Բայց ով է այդպէս պահանջում ու պատրաստում ճակատի գրոշմելիք մի համբոյր... Ճմարտութիւնը քա ասածում չէ, այլ մեր վշտահար հեկեկանքների և մեր յուսահատութեան մէջ... Զէ, ես չեմ դատում քեզ, ես չեմ կարող դատաւոր լինել իմ սեփական գործում, որ թերեւս անկարող լինեմ պարզ աչքով տեսնել: Բայց ահա թող ուրիշները դատեն ու վճռեն իմ փոխարէն..., (Դիմելով ամբոխին);—Լսեցիք բոլորը...—Զը զիտեմ, թէ ինչո՞ւ է այսպէս խօսում... Բայց ասածն արգէն ասուեց և դուք այժմ պէտք է դատաստան անէք... Դուք հօ պէտք է հաւատաք սրան, որովհետեւ սա ձեզ փրկել է...—Դէ ասացէք, հաւատում էք սրա խօսքին... Թող նրանք, որոնք հաւատում են սրա ասածներին, գուրս գան բազմութեան մէջից և գան այստեղ ու սուր հանեն մարդկային առողջ դատողութիւնը... Ես կուզէի իւմանալ, թէ ովքեր են այդ մարդիկ և ինչ կերպարանք ունեն նրանք... (Միմիայն Մարկոս և դուրս գալիս ամբոխի մէջից, ուր ՏԵՂ-ՏԵՂ միայն լուսմ և մրմունջ, այն ել անհամարձակ ու անորոշ):

**ՄԱՐԿՈ.** (Նետուելով դեպի բեմի մէջտեղը): Ես հաւատում եմ զրա ասածներին...

ԳՈՒԻՒԹՈ. Դուք սրանց մեղակիցն էք...—Բայց միւսները, միւսները: Ո՞ւր են հաւատացողները... (Վանեային);—Տեսար... Այն մարդիկ, որոնց գու փրկեցիր, քաշում են այն ծիծաղից, որ կը լցնէր այս գահլիճը. եթէ ասէին, որ հաւատում են քեզ. Նոյն իսկ նրանք, որոնք մրմուռմ էին մի քիչ առաջ, չեն համարձակում հրապարակ գուրս գալ... Իսկ ես, ես պէտք է հաւատայի...»

**Վ.Յ.ՆԵԼ.** Նրանք պարտաւոր չեն հաւատալ ինձ, բայց դու, որ սիրում ես ինձ...

ԳՈՒԻՒԹՈ. Օ՛, ի հարկէ, ես սիրում եմ քեզ, ուստի և պէտք է խարուեմ յիմարի նման... Բայց ոչ, ոչ, լսիր ինձ... Իմ ձայնը այլ ևս առաջուանը չէ... Բարկութիւնս նստեց... Այդ խորտակում է ոյժերս, և ես յանկարծ դարձայ կարծես այնպիսի մի մարդ, որ ծերանում է րոպէ առ րոպէ... Զայրոյթս չքացաւ... Ոչ, ոչ, այժմ ուրիշ բան է բոնկլու նրա տեղը... Ծերութիւնը, խելագարութիւնը... Խնկս էլ գեռ չը զիտեմ... Ես որոնում եմ, ես զննում եմ ու մնտղում իմ ներսը, որպէս զի գտնեմ իմ խեղճ բախտի մնացորդը... Միայն մի յոյս է մընում ինձ, բայց այնքան զիւրաբեկ է նա թւում ինձ, որ

սիրացնեմ ձեռք տալ հրան... Մի հասթի խոսք բառ-  
ական է այդ յոյսը խօրսակիցը համար, և առկանք պիշտո  
առիրավուած է վախէվախ փորձել այդ վերջին յօյսը... Վաճառ,  
ես շատ մեծ սխալ արեցի, որ ամրօնիքն իսկանչեցի այսուեղ նախ  
քան բեզզից իմանալու... Ես մոռացայ, որ ամօթի զգացմաննը  
չեր թոյլ տալ քեզ հրապարակու ասեմ... Դու չես համարձակ-  
ւում նրանց ասել, որ այս հրէշը ամրացել է քո մարմին...  
Այս, ես պէտք է սպասէի, մինչեւ մնանկ մայրնք... Դու ինձ  
կը խոստավանէիր զազրելի ճշմարտութիւնը... Բայց չէ որ, ա-  
ւազ, ես էլ, որիներն էլ զիտենք արդէն այդ ճշմարտութիւ-  
նը... Չէ որ այժմ ոչ է արդէն, էլ ինչ կարիք կայ, Վաճառ,  
ծածկելու այլ ես այդ ճշմարտութիւնը... Այժմ պէտք է ասեմ,  
այժմ ամօթխածութիւնդ պէտք է ինձն իրան յազթի... Դու  
չես բարկանալ ինձ վրայ... Կարդ էլ կը հասկանաս... Այսպիսի  
բոգիչներում մարդու խնկըը չը զիտէ այլ ես, թէ...

ՎԱՅՆՆԱ. Նայիր ինձ, Գուիդո—Այս իմ վերջին հայեացքի  
մէջ ես ամփոփում եմ իմ ամրող ոյժը, իմ ամրող անխարզա-  
խութիւնը, այն ամենը, ինչ որ ես պարտական եմ քեզ... Ա-  
մօթխածութեան հետեանք չէ իմ տածը, այլ զուտ ճշմարտու-  
թիւն... Այս մարդը չի տիրացել ինձ...

ԳՈՒԻԴՈ. Լաւ, լաւ, շատ լաւ... Այլ ես ոչինչ չի մնում  
ինձ... Այժմ ես ամեն ինչ զիտեմ... Այս, այդ ճշմարտութիւն է  
կամ, ձիշտ տասծ, սէր... Այժմ ես հասկանում եմ... Դու ու-  
զում էիր սրան փրկել... Չը զիտեմ, թէ ինչպէս մի զիշերուայ  
մէջ կարող էր այդ տատիճան փոխուն այն կինը, որին ես այն-  
քան սիրում էի... Բայց սխալուել ես, այդ միջացով չի կարելի  
փրկել սրան... (Զայնի բարձրացնելով).—Լսեցէք ինձ, զուք ա-  
մնքու Վերջին անգամն է... Այս բոցէիս երգուելու եմ... Դեռ  
ինձ պահում եմ անդունզի ափին... Մի բոցէ անց՝ մեռքերս  
պոկ կը գան... Չեմ ուզում, որ զուք կորչի այդ բոցին... Դեռ  
լսում էք ինձ... Զայնս ուժառագու է եղել... եթէ չը լսում  
մօտեցէք...—Տեսնում էք այս կինչը և այս մարդուն... Պարզ է,  
որ սրանք սիրում են միմնանց...—Դէ լաւ լսեցէք ու մի մո-  
ռանապ, ես կշում եմ ամեն մի խօսք նոյնքան իմամբով, որ-  
քան ինամբով բժիշկը կշում է զեղը մերձիման հիւանդի  
համար,—սրանք, իմ համաձայնութեամբ, աղաս-համարձակ  
դուրս կը գան այստեղից ասանց որ և է նախատինք կամ վետա  
կրելու, և կը տանին հետները՝ ինչ-որ սիրուներն ուզի... Ճա-  
նապարհ տուէք ու ծաղիներ ցանէք վրաները, եթէ ուզում  
էք... Թող երթան, ուր որ օէրը ճանապարհ ուզց կը տայ իրանց  
մոլեգնութեանը, միայն թէ այս կինը թող ասի ինձ միակ

հպարաւոր ծշմարտութիւնը, միակ բանը, որ գեռ սիրում եմ նրա մէջ և որ նա պարտական է ինձ ասել այն ազատութեան փոխարէն, որ տալիս եմ իրան...—Հասկացար, Վաննա, Այս մարդը տիրացել է քեզ...—Պարզ ասա՛ այս կամ ոչ. այդ է իմ բոլոր ուղածը... Փորձութիւն չէ այս, ոչ էլ թակարդ; Ես երդում կերպ, Վկայ են ամենքը:

ՎԱՆՆԱ. ծշմարդան ասացի... Սա ինձ ձեռք չի տուել...  
ՔՈՒԻԴՈ. Շատ լաւ, զուք ինքներդ ասացիք:—Դուք ինքներդ զատապարտեցիք սրան:—Այլ ես ոչինչ չի կարելի անել:—Այժմ ես սթափում եմ... (Մօտենալով պահապաներին եւ նըրանց զայց ամառի Պրինչիվալեյին):—Այս մարդը ինձ է պատկանում: բանեք սրան, կազեցէք ձեռք ու ոտքը. տիրէք սրան ներքե, այս դահլիճի տակի ամենախոր զնդանները:—Ես էլ գալիս եմ հետներդ: (Վաննային): Դուք այլ ես չէք տեսնիլ սրան: և ես կը դարձ ձեզ հաղորդելու վերջին ծշմարտութիւնը, որ սրա վերջին խօսքերը կը յայտնեն շուտով...

ՎԱՆՆԱ. (Նետուելով պահապաների մէջտեղը, որոնք բրնձում են Պրինչիվալեյին): Ոչ, ոչ: Դա իմ է... ես սուտ ասացի: Ես սուտ ասացի: Դա տիրացել է ինձ: Դա տիրացել է ինձ... Դա ունեցել է ինձ... Տիրացել է ինձ... (Պահապաներին յետ նիելով): Յետ քաշուեցէք այստեղից... Չեռք չը տաք սրան, օս իմ բաժինն է... Սա միայն ինձ է պատկանում... Ես իմ ձեռքով պէտք է տեսնեմ սրա դատաստանը... Սա ինձ տիրացաւ ստորաբար, լրբար, տիրացաւ, տիրացաւ...

ՊՈՒՆՉԻՎԱԼԵՅ. (Եշատելով խեղդել երա ձայնը): Սուտ է ասում: Սուտ է ասում: Սուտ է խօսում, որ ինձ փրկի, բայց ամենասոսկալի տանջանքները չեն կարող...

ՎԱՆՆԱ. Լուցէք... (Դատօնալով դեպի ժողովուրդը): Վախեննում է... (Մօտենալով Պրինչիվալեյին) իբր թէ ցանկանալով կապսել երա ձեռները: Շուտ արէք, տուէք ինձ պարաներն ու շղթաները... Այժմ, երբ արդէն ազատութիւն եմ տուել զայրոյթիս, ես եմ սրան շղթայելու և ես եմ սրան մատնելու ձեր ձեռքը... (Պրինչիվալեյի ձեռները կապում են ասում ականջին):—Լոիր, նա մեզ փրկում է: Լոիր նա մեզ միշացնում է իրար հետ... Ես քեզ եմ պատկանում այսուհետեւ, ես քեզ սիրում եմ... Թող քեզ շղթայեմ... Յետ կազատեմ քեզ... Ես կը լինեմ քո պահապանը... Մերք կը փախչեմք սիրախ... (Դուռավիլ, իբր թէ ցանկանալով լոել տալ Պրինչիվալեյին): Լուցէք... (Դիմելով ամբոխին): Կամաց ձայնով աղաչում է ինձ... (Բանալով Պրինչիվալեյի դեմքը): Նայեցէք սրա դէմքին... Տեսէք, գեռ կրում է այս սոսկալի զի-

շերուան հետքերը... (Բանալի իր վերարկուն իւ ցոյց տարս  
արիման ուսը): Իմ զբայ էլ նշան է մեացել... Առսկալի սիրա-  
լին զիշեր... Նայեցէք, ոս ինքն է... Տեսէք, որդան զարչելի է  
և անպիտան... (Տեսնելով, որ պահապանները շարժում են, ու-  
զելով տանել Պրինչիվալելին):—Զէ, չէ, ինձ թողէք սրան Սա-  
խմ բաժինն է: Սա իմ որսն է և ուզում եմ, որ միայն ինձ  
պատկանի... Բանեցէք, լու պահէք... Զէք տեսնում, որ ուզում  
է փախչել...

ԳՈՒԹԻՉՈ: Հասրա ինչու համաձայնեց զալ... Ինչու էիր  
ուում ասում...

ՎԱՆՆԱ: (Տատանուելով ու խօսեն վիճուկով): Սուս էի  
ասում... Զը զիտեմ... Ես չեր ուզում տանել... Լոիր, ահա այժմ...  
Այս, այս, զու այժմ կը հասկանաս... Մարդ շատ անզամ չի  
իմանում, թէ ինչ է անում... Ո՞գ կարող է ամեն ինչ նախա-  
տեսել... Երբ զնում էի այնտեղ, մարտով չեր անցնում... Բայց  
բան է, պատահում է... Այս, այս, զու այժմ կիմանաս... Քոզը  
պատուեց ի՞նչ արած, որ քեզ զիշտ կը պատճափի. չէ որ  
ինքդ էիր ուզում... Ա՞ս, վախենում էի քեզանից... Վախե-  
նում էի յուսահատութեան հասցեել սէրդ... Այժմ զու ինքդ ես  
ուզում, որ ես այդ անեմ... Շատ լաւ նւրեմն կ'ասեմ քեզը  
(Աւելի հանգիս ու վսան ձայնով): Ոչ, ոչ, ես քո կարծած զի-  
տաւորութիւնը չեմ ունեցել ես սրան նրա համար չեմ քերել  
այստեղ, որ ամենքը սրա դահիճը դառնան ու բոլորս միասին  
հանենք մեր վրէժը... Իմ դիտաւորութիւնս այդքան վսեմ  
չէր, բայց աւելի էր տողորուած քո սիրով... Ես ուզում  
էի սրանել սրան ամենատանտ կերպով, բայց և ուզում  
էի, որ այս խայտառակ զիշերուան խայտառակ չիշողութիւնը  
չը ծանրանայ քո զլիքն մինչեւ մեր մահուան օրը, Ես ուզում  
էի վրէժ հանել միայնակ ու ծածուկ, ես սրանելու էի սրան  
դանդաղ մահով, հասկանում ես, սակաւ առ սակաւ, մինչեւ որ  
սրա սեւ արիւնը, կաթ առ կաթ ծորելով, չնչէր իր արած  
ժանատ ոճիրը... Դու չէիր իմանալ երրէք սոսկալի ճշմարտու-  
թիւնը, և սոսկալի յիշողութիւնը չէր ցցուիլ երրէք, իրը ժանա-  
ուրուական, մեր քաղցր համրոյների միջեւ... Խոստվանում  
եմ, ես վախենում էի, թէ զու չես կարողանալ այլ եւս սիրել  
ինձ, երեւակայերով այդ պատկերը... Ես զիտեմ, որ խելազտ-  
ութիւն էր արածս, որ անհնար բան էր ուզածս... Բայց այժմ  
զու ամեն ինչ կ'իմանաս... (Դիմելով ամբոխին): Որովհետեւ  
բանն այստեղ է հասել և այլ եւս կարիք չը կայ խնայելու մեր  
սիրոյ զգացմունքը, ուրեմն զուը էլ պէտք է հասկանար... Պէտք  
է ամեն ինչ պարզ տանմ և դուք պէտք է լինել իմ զատաւորը...

Ահա թէ ինչէ եղել իմ արածու. այս մարդը, ինչպէս առաջի, տիրացաւ ինձ ստորաբար, լրաբար... ես ուզում էի սպանել սրան և կոր սկսուեց մեր մէջ... Բայց սա ինձ զինաթափ արեց... Այն ժամանակ աւելի խիստ վրէժինդրութեան ծրագիր ծաղեց մտքում և ես սկսեցի ժպտալ սրա երեսին... Սա հաւատաց իմ ժպտին... Օ՛, խելագարներ են աղամարդիկը... Եւ մենք իրաւունք ունենք նրանց խարել... Նրանք սիրում, պաշտում են սուտը... Երբ նրանց ցոյց են տալիս կեանքը, նրանք կարծում են, թէ մահ է այդ; Երբ մահ են առաջարկում նրանց, կեանքի տեղ են ընդունում նրանք... Սա կարծում էր, թէ տիրանալու է ինձ, բայց խկապէս ինքն ընկաւ իմ ձեռքը... Ահա այժմ գերեզման է մտնում և ես իմ ձեռքով կը կնքեմ գերեզմանի խուփը... Ես գիտէի, որ պէտք է սրան այստեղ բերել, իբրեւ մի հեզ զառն, համբոյրներ տալով... Եւ ահա սա իմ ձեռքումն է և ես երբէք չեմ բաց թողնիլ սրան ձեռքիցս... Օ՛, իմ սիրուն Պրինչիվալէ; Այնպիսի համբոյրներ կը տեսմես այժմ, որ երբէք ոչ մի մարդ չի տեսել:

ԳՈՒԽՈ, (Մօտենալով): Վաննա...

Վ.Ո.ՆՆԱ: Մէկ մօտիկից նայիր սրան... Ի՞նչ յոյսեր ունէր... Խսկոյնսեթ հաւատաց, երբ ասացի «սիրում եմ քեզ, Պրինչիվալէ»... Օ՛, գժոիք որ տանէի, անխօս կը դար յետեւիցս... Ես համբուրում էի այսպէս... (Զերմ համբոյրներ է գրում Պրինչիվալիի ցրուեներին): Սիրում եմ քեզ, Զիանէլլո... Դու էլ համբուրիր ինձ... Այս համբոյրներն են միայն խկական համբոյրներ... (Ծուռ գալով դեպի Դուիդօն): Տեսնում ես, դեռ այժմ էլ համբոյրներիս պատասխանում է համբոյրով... Օ՛, այսպիսի սոսկումից յետոյ շատ հեշտ է անցնել ծիծաղի... Տէր, սա իմս է առաջի Աստուծոյ և մարդկանց... Ես ուզում եմ, որ սա իմս լինի և իմս կը լինի... Սա այս գիշերուան վարձն է և հրաշալի վարձ... (Օրուում է եւ յենուում սիւներից մէկին): Զգոյշ կացէք, վայր եմ ընկնում... Ես չեմ կարող դիմանալ այսպիսի մեծ հրձուանքի... (Ենչասպան ձայնով): Հայր իմ, ձեզ եմ յանձնում սրան, մինչեւ որ ոյժերս... Թող տառնեն նախ քան..., Թող մի զնդան ընտրեն սրա համար, այնպիսի խոր զնդան, որ ոչ ոք չը կարողանայ... Եւ իմ մօտ կը լինի բանալին... Թող խկոյն բերեն ինձ... Թող ոչ ոք ձեռք չը տայ սրան..., Սա իմ բաժինն է, լսում էք, իմ բաժինը, և չեմ ուզում, որ ուրիշի մատ դիպչի սրան... Գուիդօ, սա ինձ է պատկանում... (Մի բայլ անելով դեպի Մարկօն): Հայր իմ, սա իմս է, և գուք պատասխանատու էք սրա համար... (Ակնայտ նայելով Մարկօյին): Հասկանում էք, հայր իմ... Դուք սրա պահապան

Եթ լինելու, տեսէք, որ նախատինքի մի նշոյլ անգամ չը դիորչի սրա երեսին, որպէս զի կարողանաք սրան յետ դարձներ ինձ այնպէս, ինչպէս ես այժմ յանձնում եմ ձեզ... (Գրինշիվալեյին տանում են): Ծտեսութիւն, իմ Պրինցիվալէ... Օ՛, անգ կը տեսնուենք նորից... (Մինչ Դուիզօն գտնում է զինուորանի մէջ, որոնք կոպիտ կերպով տանում են Գրինշիվալեյին, Վաննան նիշ է արձակում, օրուում և եւ ընկեռում Մարկոյի զիրկը, որ տանելով, որ ես ընկեռու եւ, վազել էր օգնութեան):

**ՄԱՐԿՈ:** (Ըստ արագ եւ կիսաձայն, կուանալով դկախ Վաննան): Այս, հասկացայ, Վաննա... Հասկացայ քո սուտը... Դու անհնարը հնարաւոր դարձրիր... Աբածդ իրաւացի էր և շատ անիրաւ, ինչպէս այս ամենը, ինչ որ մարդիկ անում են... կեանքը իրաւունքներ ունի... Աթափուիր, Վաննա... Պէտք է շարունակել սուտը, որովհետեւ չեն ուզում հաւատալ ճիշտը ասելիս... (Վանչելով Դուիզօյին): Դուիզօ, Վաննան սթափուում է... Կանչում է քեզ...

**ԳՈՒԻՆԴՈ:** (Վազեկվազ մօսենում է ու իր զիրկն առնում Վաննային): Ի՞մ Վաննա... Ժարտում է... Պատասխանիր ինձ, իմ Վաննա... Ես երբէք չեմ կասկածել... Այժմ, ամեն ինչ վերջացաւ, և ամեն ինչ մոռացութեան կը արուի արդար վրէժից յետոյ... Մանր երազ էր, անցաւ-զնաց...

**ՎԱՆՆԱ:** (Աչքերը բանալով, սասիկ բոյլ ձայնով): Ո՞ւր է նա... Այս, զիտեմ, զիտեմ... Բայց ուր է բանալին, շուտ արէք տուէք ինձ... Նրա բանաթի բանալին... Զը թողնէք, որ ուրիշ սերը...

**ԳՈՒԻՆԴՈ:** Պահապանները այս բոպէիս կը զան ու բանալին կը յանձնեն քեզ...

**ՎԱՆՆԱ:** Ուզում եմ, որ միայն իմ ձեռքումս լինի բանալին, որպէս զի հաստատ իմանամ.., Որպէս զի ոչ մի ուրիշ մարդ... Հա, վատ երազ էր... Նուասվ կը սկսուի լաւ երազը... Լաւ երազը...

Վ. ա բ ա զ ո ւ ր

Թարգմ. Տ. ՅԱՎՀԱՆՆԻՍԵԱՆ